Մ. Տ. ԲՈՐՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԲՆՈՒՅԹԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ «ՊԱՅՔԱՐ» ԹԵՐԹՈՒՄ (1915—1916 ԹԹ.)

1914 թ. օգոստոսին սկսված առաջին համաշխարհային պատերազմը, որը վաղուց նախապատրաստում էին իմպերիալիստական խոշոր տերությունները, մարդկությանը կանգնեցրեց մինչ այդ չտեսնված մեծ փորձության առջև։

Երկրորդ ինտերնացիոնալի խոշորագույն կուսակցությունները և նրանց առաջնորդները, հակառակ ինտերնացիոնալի կոնգրեսների որոշումներին, դավաճանեցին պրոլետարիատին և աշխատավոր մասսաներին, անցան սեփական երկրների բուրժուազիայի կողմը, ամեն կերպ արդարացնելով և սրբագործելով համաշխարհային սպանդը։ Կարճ ասած՝ օպորտունիզմը, որը երկար տարիներ փարթամորեն աճում էր երկրորդ ինտերնացիոնալի կուսակցություններում, վերաճեց սոցիալ-շովինիզմի։

Միակ կուսակցությունը, որ վճռաբար հանդես եկավ ընդդեմ իմպերիալիստական պատերազմի՝ հանուն պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիզմի, դա բոլշևիկների կուսակցությունն էր։ Վ. Ի. Լենինը պատերազմը սկսվելուց անմիջապես հետո գրած իր հայտնի «Պատերազմը և ռուսական սոցիալ-դեմոկրատիան» թեզիսներում առաջ քաշեց իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու և պատերազմում իր կառավարության պարտության լոզունգները[1]։

Սկսվեց անհավասար պայքար բոլշևիկների և միջազգային օպորտունիզմի՝ սոցիալ-շովինիզմի, ցենտրիզմի միջև, որը շատ դժվար ու երկարատև էր, քանի որ կռվող բոլոր երկրներում օպորտունիզմը բոլշևիկների և հետևողական ինտերնացիոնալիստների դեմ հանդես էր գալիս դաշնակցած բուրժուազիայի հետ։

Անդրկովկասի նացիոնալիստական բոլոր կուսակցությունները և հոսանքները նույնպես պաշտպանում էին ժողովուրդների համար կործանարար պատերազմը, տարածում էին շովինիզմի վարակը երկրամասի բազմազգ աշխատավորների միջև։ Նման պայմաններում Վ. Ի. Լենինը պահանջում էր բոլոր պատերազմող երկրներում բացատրել աշխատավորներին տեղի ունեցող պատերազմի իսկական պատճառները և նպատակները, ցույց տալ նրանց, որ այն մղվում է հակառակ իրենց շահերի, նախապատրաստելով մասսաներին գալիք հեղափոխությանը[2]։ Երկրամասի աշխատավորության շրջանում լենինյան այս պատգամները իրականացնելու գործում անգնահատելի աշխատանք է կատարել սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթը, որը լույս էր տեսնում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թիֆլիսում հայերեն լեզվով։ Շատերը չէին հավատում, թե «Պայքարը» կարող է երկար կյանք ունե-

---

1 Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. 2, էջ 755—756։

2 Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. 2, էջ 754։

նալ։ Բայց նա ոչ միայն գիմադավ ժամանակի դժվարություններին, այլև բարձր պահեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը։

Իսկ որո՞նք էին սկսված պատերազմի պատճառները, ո՞րն էր նրա բնույթը, ի՞նչ նպատակով էր այն մղվում, ինչո՞ւ այդքան հորդ արյուն էր հոսում ռազմի դաշտում։ Արդյոք այդ պատերազմը մղվում էր արդարությունը վերականգնելու, փոքր ազգերին ազատագրելու համար, թե՞ այլ նպատակներ էր հետապնդում։ Այս և մի շարք այլ հարցերի պատասխանը տալիս է Վ. Ի. Լենինը 1914 թ. օգոստոսին պատերազմի մասին գրած թեզիսներում։ «Եվրոպական և համաշխարհային պատերազմը ունի բուրժուական, իմպերիալիստական դինաստիական պատերազմի պարզորոշ բնույթ։ Պայքար շուկաների համար և օտար երկրների կողոպուտ, երկրների ներսում պրոլետարիատի և դեմոկրատիայի ռևոլյուցիոն շարժումը խափանելու ձգտում, բոլոր երկրների պրոլետարներին դիմարացնելու, բաժանելու և ջարդելու ձգտում... այս է պատերազմի միակ ռեալ բովանդակությունը և նշանակությունը»[3],— գրում էր Վ. Ի. Լենինը։

Այստեղից երևում է, որ սկսելով համաշխարհային պատերազմը, իմպերիալիստները հետապնդում էին երկու հիմնական նպատակ՝ մի կողմից վաճառահանման շուկաների, հումքի աղբյուրների և ուրիշի տերիտորիաների զավթումներ, մյուս կողմից ճնշել հեղափոխական շարժումները կռվող երկրներում, որոնք աճում էին ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ։ Վ. Ի. Լենինը միաժամանակ մերկացնում էր իմպերիալիստական բուրժուազիայի հորինած այն կեղծիքը, թե իբր սկսված պատերազմի միակ նպատակը «փոքր ազգերի իրավունքների» և «դեմոկրատիայի» հաստատումն է, նա ցույց էր տալիս, որ կռվող պետությունները ձգտում են նվաճել նաև այն փոքր ժողովուրդներին, որոնց «պաշտպանությամբ» իրենք հանդես են գալիս։

«Բոլոր մեծ տերությունները,—գրում էր Վ. Ի. Լենինը,—վարում են իմպերիալիստական, կապիտալիստական պատերազմ, ավազակային պատերազմ։ Պատերազմ փոքր և ուրիշ ժողովուրդների ճնշելու համար»[4]։

Ելնելով համաշխարհային պատերազմի պատճառների և բնույթի լենինյան այդ գնահատականից «Պայքար» թերթի շուրջը համախմբված բոլշևիկները լեգալ պայմաններում, բացատրում էին աշխատավորներին տեղի ունեցող պատերազմի զավթողական, թալանչիական, իմպերիալիստական բնույթը և անշեղորեն անց էին կացնում պարտվողական գիծը։

Քննադատական որևէ խոսք ասել թերթի էջերում Անտանտի երկրների մասին արգելված էր։ Այդ պատճառով թերթը հիմնականում քննադատել է Գերմանիային, քանի որ «նրա մասին ամեն ինչ կարելի էր գրել»[5]։ Սակայն կասկածից վեր է, որ պատերազմի հարցում թերթի քննադատությունը հավասարապես վերաբերվում է կռվող բոլոր երկրներին։ «Պայքարի» խմբագիր Ա. Մռավյանը 1917 թ. մայիսին գրում էր, որ «Պատերազմական շրջանի չափազանց խիստ ցենզուրայի լծի տակ «Պայքարը» Եզովպոսի լեզվով, հաճախ աներևակայելի, ոլորապտույտ ուղիներով կարողանում էր քարոզել հակապատերազմական մտքեր, նրան հաջողվում էր պարզել պատերազմի իմպերիալիստական բնույթը»[6]։

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 3—4։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 155։

5 Ա. Երզնկյան, Հուշեր, առաջին գիրք, Երևան, 1927, էջ 57։

6 «Սոցիալ-դեմոկրատ», № 3, 1917, 14 մայիսի։

Պատերազմի պատճառների բացատրման համար թերթը հաճախ մանրամասն մեկնաբանություններ է տալիս կապիտալիստական կարգերի ծագման և զարգացման, նրանց մեջ գոյություն ունեցող հակասությունների մասին։ Թերթը նշում է, որ «պրոլետարիատի մեծ ուսուցիչներ Մարքսը և Էնգելսը տվել են մի մեթոդ, որի օգնությամբ մենք ուսումնասիրում ենք կապիտալիստական կարգի օրենքները և ձգտումները, որ գործում են երկաթե անխուսափելիությամբ կապիտալիստական երկրներում»[7]։

Այս չափանիշից ելնելով ականավոր բոլշևիկ, հրապարակախոս Արսեն Ամիրյանը «Ազգային թե՞ դասակարգային քաղաքականություն» հոդվածում անդրադառնալով կապիտալիզմի զարգացման էտապներին, ընդգծում է այն միտքը, որ կապիտալիստական տնտեսության զարգացումը ազգային սահմաններ չի ճանաչում և ձգտում է խորտակել ազգային ինքնամփոփ տնտեսությունը, ազգային ինքնամփոփ կուլտուրան, հանուն համաշխարհային տնտեսության և համաշխարհային կուլտուրայի։ Տնտեսական զարգացման այս պրոցեսը հոդվածագրի կարծիքով կապիտալիստական երկրներին հասցրել է մի վիճակի, երբ այլևս ոչ մի պետություն չի ներկայացնում իրենից տնտեսապես անկախ և ինքնուրույն միավոր։ «Զարգացող արտադրական ուժերը ավելի նեղ են զգում իրենց ազգային պետական շրջանակների մեջ և ձգտում են պատռել այդ շրջանակները... և ինչպես մասնավոր, տնտեսական կյանքում խոշոր կապիտալը ձգտում է կլանել և կլանում է տեխնիկապես թույլ կապիտալին, այնպես էլ պետությունների միջև, խոշոր և ուժեղ պետությունները ձգտում են կլանել և կլանում են մանր կամ կապիտալիստորեն հետամնաց պետություններին... Ներկա իմպերիալիստական պատերազմը հետապնդում է վերոհիշյալ նպատակը Եվրոպայի սահմաններում»[8]։

Ինչպես տեսնում ենք, թերթը միանգամայն ճիշտ կերպով բացատրում է համաշխարհային պատերազմի պատճառները և նրա բնույթը։

Հանրահայտ է, որ իմպերիալիստական պատերազմի նախապատրաստման ժամանակ և նրանից հետո կապիտալիստական երկրների իշխող խավերը և բուրժուազիան, դաշնակցած երկրորդ ինտերնացիոնալի օպորտունիստների հետ, ամեն կերպ արդարացնում էին այն, պնդելով, որ իբր թե պատերազմը մղվում է խախտված արդարությունները վերականգնելու համար և մատնացույց էին անում «Ավստրո-սերբական կոնֆլիկտը և Բելգիայի չեզոքության խախտումը»։

«Պայքարը» բացահայտում է այս դրույթի անհիմն լինելը, նշելով, որ «Ավստրո-սերբական կոնֆլիկտի կամ Բելգիայի չեզոքության խախտման մեջ չէ, որ պետք է տեսնել ներկա համատարած ավարառության և ավերածության պատճառը, դրանք միայն շարժառիթներ եղան։ ...Ներկա իմպերիալիստական պատերազմի պատճառները պետք է որոնել ներկա հասարակական կապիտալիստական կազմակերպության մեջ»[9]։

Իր այս միտքը ավելի պարզելու և հիմնավորելու համար թերթը հաջորդ համարներից մեկում ընդգծում է, որ պատերազմը մղվում է նոր տերիտորիաների, հումքի աղբյուրների և վաճառահանման շուկաների համար. «Կապի-

7 «Պայքար», № 33, 1916, 14 օգոստոսի։

8 «Պայքար», № 24, 1916, 12 հունիսի։

9 Նույն տեղում։

տալիստական բոլոր երկրներում հասարակական խոշոր դերը կատարում է բուրժուազիան։ Վերջինս անընդհատ որոնում է նոր շուկաներ։ Այդ որոնումների և նոր երկրների, շուկաների նվաճման ընթացքում անհրաժեշտորեն բախվում են տարբեր պետությունների շահերը և ձգտումները և այստեղից առաջանում են պատերազմները»[10]։

Պատերազմի պատճառների և բնույթի քննադատության հետ միասին «Պայքարը» անխնա քննադատել է միլիտարիզմը, ցույց տալով, որ առանց դրա, խոշոր կապիտալիստական պետությունները հնարավորություն չէին ունենա սկսել ներկա պատերազմը։

«Պայքարը» ընդգծում է, որ զարգացող կապիտալիստական երկրները հումքի աղբյուրներ և վաճառահանման շուկաներ ձեռք բերելու համար պետք է դիմեին ուժի, քանի որ երկրագունդը վաղուց արդեն բաժանված էր և «անտեր» տերիտորիաներ չկային։

«Եվ ահա կրուպներին այդ հարցում օգնելու է գալիս պետությունն իր զինված ուժի միջոցով· հաղարավոր ու միլիոնավոր անմեղ մարդկանց արյան գնով»[11]։

Թերթն այս հարցում քննադատելով Գերմանիային, միաժամանակ նշում է, որ այդ հատուկ է բոլոր երկրներին։ «Թող մեր ընթերցողները չկարծեն, թե մենք ուզում ենք ապացուցել, որ միայն Գերմանիան է շահագրգռված անվերջ շարունակվող պատերազմներով»[12]։

«Պայքար» թերթը գերմանական իմպերիալիզմի ագրեսիվ զավթողական պլանների քննադատության հետ միասին, ժուռնալիստական հնարներ է գտնում քննադատելու նաև Ռուսաստանի ագրեսիվ ձգտումները, հատկապես Փոքր Ասիայի նկատմամբ։

Օրինակ, գրախոսելով Ա. Յաշչենկոյի «Русские интересы в Малой Азии» գրքույկը, թերթը նպատակ է հետապնդել ցույց տալ ընթերցողներին, որ Ռուսաստանը փոքր ազգերի «ազատագրման» քողի տակ ցանկանում է զավթել Փոքր Ասիան, Կ. Պոլիսը և Արևմտյան Հայաստանը։ Ա. Յաշչենկոն արտահայտելով ռուսական ցարիզմի և բուրժուազիայի ձգտումները, իր գրքում ուղղակի գրում է, որ «Ռուսաստանը ներկա պատերազմում պետք է գրավի Կ. Պոլիսը և Փ. Ասիան... Հայաստանը և Անատոլիան մեզ համար միակ կամուրջն են հանդիսանում դեպի նեղուցները և Կ. Պոլիսը»։ Այստեղից պարզ է, որ Ռուսաստանը, ոչ թե ձգտում էր «ազատագրել» փոքր ազգերին, այդ թվում և հայերին, այլ ցանկանում էր Հայաստանը կամուրջ դարձնել իր իմպերիալիստական զավթումների ճանապարհին։ Հարց է առաջանում, իսկ ի՞նչն էր ստիպում Ռուսաստանին «ազատագրել» Հայաստանը։ Այդ հարցի պատասխանը նույնպես տալիս է ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի սպասավոր Ա. Յաշչենկոն. «Փոքր Ասիայի (Հայաստանի—Մ. Բ.) գրավումը,— գրում է նա,— մեր ձեռքը կտա տնտեսական տեսակետից ձեռնտու մի չափազանց հարուստ երկիր։ Մենք այստեղ կգտնենք, ոչ միայն գեղեցիկ ու հարմարավետ տարածություններ մեր գաղթականության համար, այլև գետնի տակ բնական արտադրություններից և հանքերից ահագին հարստություն, որ այժմ

10 «Պայքար», № 32, 1916, 7 օգոստոսի։
11 «Պայքար», № 33, 1916, 14 օգոստոսի։
12 Նույն տեղում։

պառկած է զուր տեղը»[13]։ Հասկանալի է, որ այլ կերպ լեգալ թերթը Ռուսաստանի զավթողական պլանների մասին գրել չէր կարող։

«Պայքար» թերթը մերկացնելով ցարիզմի և բուրժուազիայի ագրեսիվ ձգտումները Հայաստանում, միաժամանակ պարզաբանում էր հայ ընթերցողին, որ գրանք ամենևին ռուս ժողովրդի ձգտումները չեն։ «Ռուս ժողովրդի համար կատարելապես օտար է լիբերալ-իմպերիալիստների այս ուրույն անեքսիոնիստական տեսակետը»[14]։

Համաշխարհային պատերազմի պատճառների և բնույթի պարզաբանմանն է նվիրված Ստ. Շահումյանի գրախոսականը «Պայքարում»։ Ն. Սուխանովի «Ինչո՞ւ ենք պատերազմում» գրքի վերաբերյալ Ստ. Շահումյանը մարքսիստական դիրքերից ելնելով, համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ ներկա համաշխարհային պատերազմը իմպերիալիստական զավթողական թալանչիական բնույթ ունի և այն «...այս կամ այն թագակիր անձի փառասիրական տենչերի կամ առանձին պետությունների անսանձ ագահության ու տիրական ձգտումների արդյունք չէ, այլ կապիտալիստական բոլոր պետությունների մրցության բնական ու անխուսափելի հետևանքը»[15]։

1916 թ. թերթի առաջին համարում «Էդ. Բերնշտայնը պատերազմի մասին» հոդվածում թերթը քննադատելով պատերազմը արդարացնողներին, նշում է, որ «Կուլտուրական աշխարհում դեռ գոյություն ունեն մարդիկ, որոնք անպայման կողմնակից են պատերազմի և գտնում են, որ վերջինս միշտ մարդկային զարգացման գլխավոր ներգործող ուժն է կազմել... նման մարդիկ շատ կան Գերմանիայում, որոնք ամեն կերպ ձգնում են արդարացնել Գերմանիայի կողմից մղվող պատերազմը»[16]։

Միջազգային օպորտունիզմի նահապետը փորձում էր ապացուցել, որ Գերմանիան «խեղդվում է» իր սահմաններում և պահանջում էր, որ բանվոր դասակարգը և նրա կուսակցությունները օգնեն կառավարությանը ընդարձակելու այդ սահմանները։ «Պայքարը» սնանկ է համարում պատերազմը արդարացնելու այդ փաստարկը և ցույց է տալիս, որ եթե իրոք Գերմանիան «խեղդվեր» իր տերիտորիայի քիչ լինելու հետևանքով, ապա նրա տնտեսությունն այդ աստիճան զարգանալ չէր կարող։ Իր այդ թեզը հիմնավորելու համար «Պայքարը» նշում է, որ արդեն համաշխարհային պատերազմի նախօրյակին «Գերմանիան իր ազգային հարստությամբ գերազանցում էր Անգլիային և Ֆրանսիային, թե բացարձակ և թե հարաբերական մտքով»[17]։ Թերթն ընդգծելով, որ 1887—1912 թթ. Անգլիայի արտաքին առևտուրը աճել է 103 տոկոսով, իսկ Գերմանիայինը՝ 225 տոկոսով, նշում է, որ «Այս վիթխարի, ուղղակի շշմեցուցիչ առաջադիմության հանդեպ գտնվում են դեռ մարդիկ, որոնք ուզում են ապացուցել աշխարհին, որ Գերմանիան չի կարող բավականանալ կյանքի իր ներկա աղբյուրներով ու միջոցներով, դրա համար կռվում է»[18]։

Օպորտունիզմը, հանձինս 2-րդ ինտերնացիոնալի պարագլուխների, ճրգնում էր ապացուցել, որ գաղութարարությունը առաջադիմական երևույթ է, իբր

13 «Պայքար», № 40, 1916, 1 հոկտեմբերի։

14 Նույն տեղում։

15 «Պայքար», № 40, 1916, 1 հոկտեմբերի։ (Տե՛ս նաև Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 388)։

16 «Պայքար», № 1, 1916, 3 հունվարի։

17 «Պայքար», № 1, 1916, 3 հունվարի։

18 Նույն տեղում։

այն «Քաղաքակրթության տարածման հիմնական ձևերից մեկն է»։ Այս բացահայտ կեղծիքի մերկացմամբ հանդես է եկել «Պայքար» թերթը։

1916 թ. հոկտեմբերին Շահումյանը «Պայքար» թերթում հատուկ անդրադառնում է իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականությանը, անարգանքի սյունին գամելով այն «սոցիալիստներին», որոնք փորձում են արդարացնել գաղութների դավթումները և առհասարակ նրանց գոյության անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը։ «Ըստ Վանդերվելդի,— գրում է Ստ. Շահումյանը,— ով, որ հակառակ է գաղութային քաղաքականությանը, նա դրանով իսկ հակառակ է քաղաքակրթության տարածմանը»։

Ստ. Շահումյանը առարկում է սրան, ապացուցելով, որ գաղութատիրությունը երբեք «անհրաժեշտ հետևանք չէ քաղաքակրթության զարգացման»։ Հոդվածագիրն այնուհետև նշում է, որ գաղութականությունը ոչ հնում և ոչ էլ նոր ժամանակներում չի եղել մի այնպիսի ընդհանուր երևույթ, որ զարգացած լիներ միշտ քաղաքակրթության զարգացման հետ միաժամանակ։ Նա սահմանափակվել է որոշ ժողովուրդներով և ժամանակներով[19]։

Հետո Ստ. Շահումյանը ցույց է տալիս, որ իմպերիալիզմի էպոխայում պետությունների մրցումը և պատերազմի վտանգն այնքան ավելի են ուժեղանում, որքան ավելի՝ «ազատ» մնացած երկրամասերը գրավվում են, և նոր գաղութներ ձեռք բերելը հնարավոր է դառնում միայն ուրիշ պետությունների ունեցածը խլելու միջոցով[20]։

«Պայքար» թերթը քննադատելով պատերազմող երկրների իմպերիալիստական զավթողական ձգտումները, ճիշտ է գնահատում ԱՄՆ-ի ակտիվ դերը համաշխարհային պատերազմի տարիներին։ Թերթի մի շարք հոդվածներում այն միտքն է ընդգծվում, որ չնայած ԱՄՆ-ը պատերազմին արտաքուստ չէր մասնակցում, բայց նա շահագրգռված էր այդ պատերազմով, որովհետև «կռվող կողմերը կթուլանան, իսկ ինքը կհարստանա և կուժեղանա»[21]։ Թերթը իր այս տեսակետը հիմնավորելու համար բազմաթիվ օրինակներ է բերում, այն մասին, որ ԱՄՆ-ի արտաքին առևտուրը 1914—1916 թթ. աճել է մի քանի անգամ և միլիոնատերերի թիվը ավելացել է 425-ով։ «Պայքարի» կարծիքով, ԱՄՆ-ը ոչ միայն «իր հզոր արդյունաբերությունը հարմարեցրել է դաշնակիցների շահերին», այլև հանդես է գալիս միջազգային բանկիրի դերում հսկայական գումարներ տրամադրելով Անտանտի երկրներին։ «Միացյալ Նահանգները միջազգային բանկիրի դերում» հոդվածում նշվում է, որ 1916 թ. ԱՄՆ-ը Անգլիային և Ֆրանսիային տվել է 4 միլիարդ դոլար փոխառություն 5,5 տոկոսով։

«Այս փոխառությունները շատ նշանակալից են ապագայի համար,— գրում է «Պայքարը»։ Սրանով հիմք է դրվում Միացյալ Նահանգների թե՛ տնտեսական և թե՛, մանավանդ, քաղաքական ազդեցության ավելի լայն շրջանների վրա ԱՄՆ-ի սահմաններից դուրս տարածելուն»[22]։

Այստեղից պարզ է, որ ԱՄՆ-ը դեռևս առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ձգտում էր իր տնտեսական, քաղաքական ազդեցությունը տարածել Եվրոպայի ու Ասիայի երկրների վրա, որը ավելի ուժեղացավ այդ պատերազմից հետո և շարունակվում է մինչև օրս։

---

19 «Պայքար», № 41, 1916, 9 հոկտեմբերի։
20 «Պայքար», № 38, 1916, 18 սեպտեմբերի։
21 Նույն տեղում։
22 «Պայքար», № 49, 1916, 11 դեկտեմբերի։

«Պայքար» թերթը բացի համաշխարհային պատերազմի պատճառների և բնույթի քննադատությունից, ընթերցողներին պարզաբանել է նրա ընթացքը և պատճառած վնասները։ 1916 թ. հունվարին «Պայքարը» հանրագումարի բերելով պատերազմի երկու տարվա արդյունքները, նշում է, որ այդ ժամանակամիջոցում կռվող կողմերը ծախսել են 858 միլիարդ ռուբլի և բացի այդ տվել միլիոնավոր զոհվածներ, հաշմանդամներ ու անհայտ կորածներ։ Երկու տարվա ընթացքում «Եվրոպան կորցրել է 20 միլիոն մարդ»[23],— գրում է թերթը։

1916 թ. ապրիլին «Պայքարը» նորից անդրադառնալով պատերազմի ընթացքին և նրա հավանական ելքին, ելնելով լենինյան այն դրույթից, որ համաշխարհային պատերազմը պատճառած վնասների հետ միասին այն օգուտն է բերում, որ մոտեցնում է հեղափոխության հաղթանակը, նշում է, որ «հավանորեն այս պատերազմը չնայած իր անհաշիվ զոհերին և ավերածությանը, որպես մի խոշոր՝ դեռևս նմանը չունեցող պատմական սոցիալական ակտ ունենալու է և իր խոշոր հետևանքները... մարդկային հասարակության շահերի օգտակարության տեսակետից»[24]։

Սակայն ահավոր պատերազմը շարունակվում էր, ժողովուրդը պահանջում էր վերջ տալ նրան, բուրժուազիան աշխատում էր օպորտունիզմի օգնությամբ խաբել մասսաներին՝ նրանց ռազմի դաշտ ուղարկելով, միաժամանակ սուտ խոստումներ տալով ժողովրդին, որ իբր քայլեր են արվում հաշտության ուղղությամբ։ «Պայքարը» անդրադարձել է բուրժուազիայի այս խաբեության մերկացմանը նույնպես։ Թերթը նշում էր, որ եթե լսենք բուրժուական կառավարությունների հայտարարություններին, ապա նրանք հաշտության, աղատության ձիթենին բռնած մարդկությանը ավետիք բերող աղավնիներ են, սակայն մի չար ոգի կասեցնում է նրանց այդ ավելի քան մարդօգուտ, ազգաշահ և սիրավառ ձգտումները[25]։

Ո՞րն է այդ չար ոգին՝ հարցնում է թերթը, որ ստիպում է մեծ տերությունների ղեկավարներին ձիթենին վոխել սրով և «այսքան հորդահոս արյան գետերի պատճառը դառնալ»։ Բանից պարզվում է, որ այդ բոլորի պատճառը իմպերիալիզմն է։ Թերթը որպեսզի ապացուցի, որ կառավարությունները, չնայած իրենց հայտարարություններին, առանց երկրի իշխող դասակարգերի համաձայնության, հաշտություն կնքել չեն կարող, անդրադառնում է Գերմանիայի կանցլեր Բետման Հոլվեգի ռայխստագում արած հայտարարության պարզաբանմանը։ Բետման Հոլվեգը հայտարարել էր, որ կռվող երկրների մի շարք ֆինանսական գործիչներ հաշտության վերաբերյալ բանակցություններ են վարել, բայց Անգլիայի և Ֆրանսիայի ֆինանսական գործիչները դեմ են արտահայտվել հաշտության կնքմանը։ Սրանով թերթը ցույց է տալիս, որ նախ՝ պատերազմող երկրների ֆինանսական գործիչները քննարկում են հաշտության հնարավորության հարցը և, եթե այն իրենց շահերին չի հակասում, նոր ցուցում են տալիս կառավարություններին սկսել նման բանակցություններ։

«Այստեղից պարզ է,— գրում է «Պայքարը»— թե ովքեր են իրականում պատերազմը սկսողները և այն վերջացնողները»[26]։ Եվ քանի որ արդյունաբե-

23 «Պայքար», № 2, 1916, 10 հունվարի։
24 «Պայքար», № 19, 1916, 18 ապրիլի։
25 «Պայքար», № 15, 1916, 10 ապրիլի։
26 «Պայքար», № 15, 1916, 10 ապրիլի։

րության ու ֆինանսների ներկայացուցիչները դեռ չեն կարողացել հասնել իրենց նպատակներին,— գրում է «Պայքար» թերթը,— «...ուստի ամբողջ աշխարհը պարտավոր է դեռևս ենթակա լինել պատերազմի արհավիրքներին... դեռևս պետք է զոհվեն միլիոնավոր կյանքեր, մինչև որ ոսկու քսակի ներկայացուցիչները կստեղծեն նպաստավոր պայմաններ իրենց առևտրի համար և դրանից հետո միայն ցուցում կարվի կառավարություններին սկսել հաշտության բանակցությունները»[27]։

«Պայքարը» հետևողականորեն անց էր կացնում այն պահանջը, որ հաշտության գործը չի կարելի թողնել բուրժուազիայի հույսին, որովհետև «եթե հաշտության հարցը բուրժուազիային թողնվի, նա դեռ շատ միլիոնավոր մարդիկ կկոտորի ու դեռ շատ երկրներ ավերակ կդարձնի միայն թե իր համար հավելյալ արժեքի նոր աղբյուրներ ստեղծի»[28]։

Այս բոլորից ելնելով, թերթը կոչ էր անում մասսաներին համախմբվել պրոլետարիատի շուրջը տիրող կարգերի տապալման համար, որովհետև այդ կարգերն են իմպերիալիստական պատերազմի սանձազերծողները։ «Ահռելի պատերազմը ծնող կարգերը,— գրում է «Պայքարը»,— իրենք են կարդում իրենց դատավճիռը, պատերազմը նրանց արդեն դրել է վտանգավոր մակարդակի վրա։ Այդ մակարդակի ավելի ևս թեքելու գործում պակաս դեր չունի միջազգային ռամկավարությունը (սոցիալ-դեմոկրատիան— Մ. Ռ.), որի գերագույն նպատակներից մեկը մարդկային հասարակության սթափումն ու վերածնությունն է»[29]։

Սա արդեն հեղափոխության կոչ էր։

Արդեն փետրվարյան հեղափոխությունից հետո, անդրադառնալով թերթի կատարած դերին, 1915—1916 թթ. «Պայքարի» ընթերցողները բարձր էին գնահատում այն, ընդգծելով, որ «Մեծ էր նրա («Պայքարի»— Մ. Ռ.) նպատակը, դժվար ու փոշոտ այն ճանապարհը, որով ընթանում էր նա։ «Պայքարը» հրատարակվում էր այն ժամանակ, երբ ինտերնացիոնալը իր ճգնաժամի օրերն էր ապրում, իսկ Գեդը, Շեյդեմանը, Պլեխանովը հեղափոխական պրոպագանդայի փոխարեն տարվեցին պատերազմասիրական հոսանքով, սոցիալ-պատրիոտական տխուր պրոպագանդայով... Ահա այդ դժվարին օրերին «Պայքարը» չդավաճանեց իր հարազատներին, նա չշլացավ գոռգոռացող թնդանոթներից, ծխացող վառոդից, նա արեց ավելին, կռիվ մղեց պատերազմի դեմ, լավ իմանալով, որ այն իմպերիալիստական բնույթ է կրում, որ դրանից ոչ մի սպասելիք չունի բանվոր դասակարգը— նա հավատարիմ մնաց ինտերնացիոնալիզմի դրոշին»[30]։

Այսպիսով, «Պայքար» թերթը, նրա շուրջը համախմբված բոլշևիկները, համաշխարհային պատերազմի տարիներին, աշխատանքային դժոխային պայմաններում, անընդհատ հետապնդվելով ցարիզմից ու ոստիկանությունից, հալածվելով գրաքննությունից ու բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններից, հերոսաբար պայքարել են համաշխարհային պատերազմի դեմ, մասսաներին բացատրել են այդ պատերազմի ծագման իսկական պատճառները

27 «Պայքար», № 15, 1916, 10 ապրիլի։
28 «Պայքար», № 13, 1917, 25 մարտի։
29 «Պայքար», № 4, 1916, 24 հունվարի։
30 «Պայքար», № 17, 1917, 22 ապրիլի։

և նրա իմպերիալիստական թալանչիական բնույթը, ու ելնելով Վ. Ի. Լենինի և բոլշևիկյան կուսակցության լոզունգներից՝ պատերազմի, խաղաղության և հեղափոխության վերաբերյալ աշխատել են համախմբել երկրամասի բազմազգ աշխատավորներին՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի շուրջը, նախապատրաստելով նրանց գալիք հեղափոխությանը։

М. Т. БОРЬЯН

КРИТИКА ПРИЧИН И ХАРАКТЕРА ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ «ПАЙКАР» (1915—1916 гг.)

Резюме

В статье говорится о той борьбе, которую вели большевики против мировой войны на страницах социал-демократической легальной газеты «Пайкар». Показано, как большевики: Ст. Шаумян, Ас. Мравян, С. Ханоян, А. Амирян (Амиран), А. Микоян и другие, следуя указаниям В. И. Ленина, беспощадно разоблачали причины, сущность и характер мировой войны, разъясняли трудящимся края захватнический характер, цели и стремления этой войны. Ведя последовательную борьбу против империалистических планов воюющих стран: Германии, Англии, Франции и России, «Пайкар» одновременно разоблачала также империалистические устремления США, которые еще в годы первой мировой войны стремились к распространению своего экономического и политического влияния в Европе и Азии.

Разоблачая предательскую роль партий второго Интернационала, «Пайкар» боролась и против местных буржуазных партий, которые всеми силами оправдывали империалистическую войну, и призывала народ поддержать ее.

В статье говорится также о том, как «Пайкар», ведя борьбу против империалистической войны, стремилась объединить трудящихся вокруг знамени пролетарского интернационализма, призывая их к новой революции.